Հիշողությունը օգնում է ըմբռնել պատմական գործընթացի անհրաժեշտությունը և հակասությունը: Պատմական գիտակցությունը Հայնի համար մարդ լինելու, մարդկային առաջադիմության նախապայմանն է: Հեղինակն այս վեպի մասին մի հարցազրույցում ասում է. «...սա վեպ է պատմության մասին, պատմական հասկացողության, ինչպես նաև պատմագրության մասին:» Եվ. «Իմ բոլոր գործերում ես, ինչպես ամեն գրող, ստեղծում եմ մի նոր իրականություն, նոր արվեստի իրականություն, որով հույս ունեմ ըմբռնել ուրիշ իրականությունը ինչքան հնարավոր է ավելի ճշգրիտ:» (Բայեր, 60-62)

Վեպում խոսքը ոչ այնքան առանձին անձի կյանքի մասին է, որքան փոքր քաղաքի հասարակության կողմից սոցիալիզմի կառուցման մասին:

Ք.Յայնը իր գործերում օգտագործում է դեպքերի և իրականության պատկերի սաստկացումը, նկարագրելով այն ավելի սարսափելի, քան կա իրականում: Նա դա բացատրում է Մարքսի տեսակետով. «Պետք է իսկական ճնշումը ավելի ճնշող դարձնել, նրան ավելացնելով ճնշման գիտակցությունը, խայտառակությունն էլ ավելի խայտառակ, այն հրապարակելով...»(Յայն: Աշխատել հրապարակայնորեն, 52)

Տեքստում հերոսները խոսում են, պատմում և այն ինչ նրանք պնդում, հաստատում են, ունի իր ենթատեքստը, որն ընթերցողը պետք է կարդա: Այս հիշողություն-արձանագրությունները փոխարինում են այն հարաբերությանը, կապին, զրույցին, որը պետք է տեղի ունենար քաղաքի բնակիչների միջև, բայց չի կայացել, քանի որ նրանցից ամեն մեկը ապրում է իր ամուր պատյանում, մեկուսացած ու անհաղորդ, միայնակ ու օտարացած, օտարացած մարդկանցից, շրջապատից ու իրենք իրենցից:

Ք. Յայնը իր վեպում կենտրոնական թեմաներ է դարձնում օտարացումը, հիշողությունը, ինքնասպանությունը, որոնց շուրջն են հավաքվում պատմա-սոցիալական, անձնական ու հոգեբանական պոռթկումները, որոնք արտահայտվում են վեպի կառուցվածքով, գործող անձանց ընտրությամբ և դեպքերի ընթացքով ու զարգացմամբ:

Օգտագործված գրականություն

1. R. Schnell: Geschichte der deutschsprachigen Literatur seit 1945. Stuttgart/Weimar. 1993
2. W. Emmerich: Kleine Literaturgeschichte der DDR. Leipzig. 1996
3. H. Marcuse: Triebstruktur und Gesellschaft. Frankfurt/Main. 1971
4. K. Hammer: Chronist ohne Botschaft. Christoph Hein. Ein Arbeitsbuch. Berlin/Weimar. 1992
5. L. Baier: Christoph Hein. Texte, Daten, Bilder. Frankfurt/Main. 1990
6. Ch. Hein: Oeffentlich arbeiten. Essais und Gespraechе. Berlin/Weimar. 1987
7. Ch. Hein: Horns Ende. Roman. Berlin/Weimar. 1985

Սաֆարյան Լ.Ա.
Վ. Բրյուսովի անվ. ԵՊՂՀ

ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ ԷԼԻԱՍ ԿԱՆԵՏԻԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՈՒՄ

Գերմանացի հայտնի գրող Էլիաս Կանետին գրական ասպարեզ է մտել 20-րդ դարի երեսունական թվականներին: Կանետիի ստեղծագործությունը համընդհանուր ճանաչում է ձեռք բերում միայն երկրորդ աշխարհամարտից հետո, երբ 1963-ին Գերմանիայում կրկին լույս է տեսնում «Կուրացում» /“Blendung“/ վեպը: Այդ ժամանակվանից ի վեր նա բազմաթիվ գրքեր է հրատարակում նոթեր և ակնարկներ, որոնց թվում «Մարդկանց պրովինցիա» (“Provinz der Menschen”), «Ժամի գաղտնի սիրտը» („Das Geheimherz der Uhr“), «Ուրիշ դատավարություն. Կաֆկայի նամակները Ֆելիս Բ.-ին» (“Der andere Prozess, Kafkas Briefe an Felice B.”), «Երկխոսությունն դաժան խոսակցի հետ» (“Dialog mit dem grausamen Partner”), և, վերջապես, իր ինքնակենսագրական երկը՝ երեք հատորով. առաջին հատորը կոչվում է «Փրկված լեզու» („Die Gerettete Zunge“), որը 1977 թվականին իսկույն գրավում է գրական աշխարհի ուշադրությունը, 1982-ին գրվում է «Ջահը ականջում»-ը („Die Fackel im Ohr“) և 1985-ին՝ «Աչքախաղ»-ը („Das Augenspiel“): 1981 թվականին Նոբելյան մրցանակ է շնորհվում գրականության ասպարեզում գերմանացի գրող Էլիաս Կանետիին: Էլիաս Կանետին «Փրկված լեզու», «Ջահը ականջում» և «Աչքախաղ» երկերում լուսաբանում է իր անցյալ կյանքի մի հատվածը, նրա բեկումնային և նշանակալից շրջանները՝ Ռուսչուկում անցկացրած մանկության տարիներից՝ 1905-ից մինչև 1937 թվականը: Իր պատմությունների, դիտարկումների և վերլուծությունների ընթացքում հեղինակը հեռանում է իր սեփական անձից. անցյալից հայտնվում են դեմքեր, կերպարներ և լրացնում հետ բերած տարիներն իրենց ներկայությամբ:

Կանետիի ինքնակենսագրական երկի կարևորագույն մասն են կազմում գրական դիմանկարները: Սույն հոդվածի նպատակն է մի քանի հայտնի մարդկանց դիմանկարների օրինակի հիման վրա ցույց տալ Կանետիի դիմանկարիչ - ինքնակենսագրին, որն իր ուրույն միջոցներով կարողանում է կենդանացնել ընթերցողի աչքի առաջ իր հիշողության մեջ պահպանված պատկերները, հարություն տալ մարդկանց իր խոսքի ուժով. «Մարդիկ, որոնց ես սիրում

էի, բայց նաև նրանց, ում չէի սիրում, կապրեն ևս մեկ անգամ այնքան ժամանակ, որքան ինձ (իմ գործը) կկարդան: Ես անպատմելի ուրախություն եմ ապրում, երբ մտածում եմ, որ նրանք անկախ ինձնից շարժվում են, խոսում և ապրում»: (4, էջ 159)

Ինքնակենսագրական երկում առկա բազմաթիվ դիմանկարներից սույն ուսումնասիրության մեջ ամփոփվում են Կարլ Կրաուզի, Ռոբերտ Սուզիլի, Բերտոլդ Բրեխտի, ինչպես նաև նրա կնոջ՝ տաղանդավոր գրող Վեցա Կանետի - Կալդերոնի դիմանկարները:

Գրական դիմանկարի կառուցման համար առանձնահատուկ նշանակություն ունի առաջին հանդիպումը: Այն հաստատում կամ հերքում է հեղինակի նախկին պատկերացումները: Այդպիսին է Ռոբերտ Սուզիլի դիմանկարը: Կանետին ծանոթանում է Սուզիլի հետ 1935 թվականի ապրիլի 17-ին Շվարցվալդի մի դպրոցում իր ընթերցումներից մեկի ժամանակ: Առաջին տպավորությունն այսպիսին էր. «Սուզիլը միշտ զինված էր, պատրաստ պաշտպանվելու և հարձակվելու: Յուրաքանչյուր առձակատում նա հիշում էր ամենայն մանրամասնությամբ. նրա ներքին պահանջն էր՝ բոլորին հասցնել հաղթանակի: Նա միշտ մարտական էր տրամադրված, ուներ վերապրելու բնական պատրաստվածություն և դրանից չէր ամաչում»: (2, էջ 179) Սուզիլին նա դիտարկում է երկու տարբեր կողմերից՝ Սուզիլը որպես «Մարդն առանց հատկությունների» գրքի հեղինակ և Սուզիլը որպես անհատ, որին նա անձամբ տեսել և ճանաչում է: Սուզիլ գրողի նկատմամբ նա ունի միանշանակ խորին հարգանքի զգացում: Նա ոչ մի ակնթաղթ չի կասկածում, որ Սուզիլը իր «ժամանակի գրողն է»: Մյուս կողմից նա հասարակ մահկանացու է, որը եղել է զինվորական, և այդ զինվորական դաստիարակությունը մեծ ազդեցություն է թողել նրա անձի և ստեղծագործության վրա: Կանետին նրան համեմատում է արևի հետ՝ դրանով իսկ ցույց տալով նրա մարտական ոգին: Առանձնապես կարևոր և դրական նշանակություն ունի Կանետիի համար Սուզիլի հակակրանքը փողի հանդեպ, որն, իր կարծիքով, կախվածության մեջ է պահում մարդուն, արհամարհել փողը՝ նշանակում է մերժել ուժը, մերժել իշխանության յուրաքանչյուր ձև: Կանետին գրում է. «Բոլորը գիտեին, որ Սուզիլը փողի հետ վարվել չի կարող, ավելին, նա նողկանք է զգում փողը ձեռքը վերցնելիս: Նա հրաժարվում է մտածել փողի մասին: Այն ձանձրացնում և խանգարում է նրան»: (2, էջ 185)

Երկում ոչ միայն արձանագրվում է հեղինակի վերաբերմունքը դիմանկարների հանդեպ, այլև որոշակի դիրքերից անհրաժեշտ վերլուծություն է տրվում: Այստեղ կարևորը կերպարի դերի և

Ոչանակության իմաստավորումն է: Անհերքելի է, որ ավստրիացի մեծ երգիծաբան և քննադատ Կարլ Կրաուզը մեծ ազդեցություն է գործել Կանետիի հետագա ստեղծագործության վրա: Կանետիի հարգանքը Կարլ Կրաուզի (1874-1936) նկատմամբ հասնում է աստվածացման: Կանետին ինքն է ստեղծում իր աստծուն: Կանետին երբեք չի դադարում հիանալ նրանով, անվանում է նրան «աշխարհի հրաշք», «տաղանդ», «վարպետ»: Նրա խորը ակնածանքի վկայությունն է ինքնակենսագրական երկի երկրորդ հատորի վերնագիրը՝ «Ձառը ականջում»: 1899 թվականից մինչև նացիոնալ - սոցիալիստների իշխանության գալը Կրաուզը լույս էր ընծայում «Ձահ» (“Die Fackel”) ընդդիմադիր պարբերականը: Տարիներ շարունակ Կրաուզը հանդես էր գալիս համերգային տան մեծ դահլիճում Վիեննայի հանդիսատեսի առաջ իր ասմունքի երեկոներով, հրատապ տարբեր թեմաների մասին զեկույցներով և դասախոսություններով: Կանետին առաջին անգամ տեսնում է Կարլ Կրաուզին 1924 թվականի ապրիլի 24-ին: Ամեն երեկո մարդիկ դիմավորում էին իրենց կուռքին այնպիսի ուժգին ծափահարություններով, որը նա «չէր տեսել ոչ մի համերգի ժամանակ»: «Նրա ոչ մի բառին ես չեմ կասկածում: Երբե՛ք, ոչ մի պարագայում, ես նրա դեմ չեմ գործի: Նա իմ միտքն էր: Նա իմ ուժն էր: Առանց նրա մասին մտածելու ոչ մի օր ես չէի ապրի: Ես լսում էի միայն նրա ձայնը: Բայց կային արդյո՞ք ուրիշները: Միայն նրա մոտ կգտնես արդարություն, ո՛չ, չե՛ս գտնի, արդարությունը հենց նա է: Մի շարժում և ես նրա համար ինձ կրակը կզգեմ»: (2, էջ 84) Կրաուզը քննադատում էր բռնությունը, չէր հանդուրժում ոչ մի անարդար և անբարո արարք: Նա միակն էր, որ հրապարակավ դատապարտեց Շաթենդորֆյան դատավարության անարդար որոշումը և մեղադրեց կառավարությանը 1927 թվականի հուլիսի 15-ին կատարված մարդասպանությունների համար:

Հետաքրքիր դիմանկար է նրա կնոջ՝ Վեցա Կանետի - Կալդերոնի դիմանկարը: Այս կերպարի հիմնական էության լուսաբանման համար հսկայական դեր է խաղում գեղանկարչական արտահայտչականությունը: Կանետին կարևորում է Վեցայի ժպիտը. «Վեցայի գաղտնիքը նրա ժպիտի մեջ էր: Նա գիտակցում էր այդ: Երբեմն նա փակում էր իր աչքերը ժպտալով, թարթիչները իջնում էին մինչև այտերը: Եվ, կարծես թե, նա տեսնում էր իրեն ներսից, նրա ժպիտը՝ որպես լուսամփոփ, հասնում էր նրան դիտարկողին: Նրան հնարավոր չէր դիմադրել»: (1, էջ 183) Վեցան ուներ յուրահատուկ գեղեցկություն: Առաջին հանդիպման ժամանակ Կանետին նրան նկարագրում է այսպես. «Նա շատ նման էր մի օտար արարածի: Մի հազվագյուտ, թանկարժեք իր, մի էակ, որ երևէ

չես տեսել Վիեննայում, որը չես տեսնի ոչ մի պարսկական զարդանկարի վրա: Նրա վեր բարձրացած հոնքերը, նրա սև, երկար թարթիչները, որոնցով նա վիրտուոզ ձևով մերթ արագ, մերթ դանդաղ խաղում էր, ինձ շփոթեցնում էին: Ես անընդհատ աչքերի փոխարեն նայում էի նրա թարթիչներին»: (1, էջ 85) Վեցա Կանետին կրթված, խելացի և տաղանդավոր կին էր, Կանետիի գործերի առաջին քննադատը: Հատկապես նա քննադատում էր Կանետիի կույր կախվածությունը Կրաուզից: Վեցան կին էր, որը Կանետիի աչքերում բաղկացած էր «մեծ գրականության կերպարներից»: Կանետիի համար շատ կարևոր էին իրենց գրական վեճերը, որոնց ընթացքում, ինչպես նշում է Կանետին, չկային հաղթողներ: Նա սովորեց Վեցայից հանդուրժել: «Նա ուներ խոսելու յուրահատուկ ձև, այն է՝ յուրաքանչյուր բառը ճիշտ տեղում ասել: Նրա հայացքը, ինչպես մի պատուհան, կապ է ստեղծում ներքին և արտաքին աշխարհի միջև, նայողի և նրա դիմաց գտնվողի, զուգակցվում է իր հոգու գոյության հետ»: (1, էջ 83)

Գրական դիմանկարը ստեղծելիս կարևոր դեր է խաղում, ինչպես նշել ենք, սովորաբար նաև առաջին տպավորությունը: Այդպիսին է Բերտոլդ Բրեխտի դիմանկարը: Ամբողջական դիմանկար տալու համար նա ընտրում է ամենահատկանշականը, անփոխարինելին: Արտաքինը և բնավորության գծերը զուգակցվում են իրար և դառնում են մի ամբողջական դիմանկար: Բեռլինում որոշ ժամանակ ապրելով՝ մի օր նա հանդիպում է Բրեխտին: Առաջինը, ինչ աչքի ընկավ Բրեխտի մոտ, նրա հագուստն էր: Կանետիի հիշում է. «Միակ մարդը, որը բոլորի մեջ աչքի ընկավ իր պրոլետարական հագուստով, Բրեխտն էր: Նա շատ վտիտ էր, ուներ սոված դեմք, որը գդակի պատճառով մի փոքր թեքված էր թվում, նրա խոսքը չոր էր և կտրուկ, նրա հայացքից զգում ես քեզ ինչպես մի արժեքավորվող առարկա, և ինքը՝ որպես գրավառու, իր խայթող սև աչքերով գնահատում է քեզ: Նա քիչ էր խոսում, գնահատման արդյունքի մասին քիչ բան կարելի էր իմանալ: Անհավատալի էր, որ նա միայն երեսուն տարեկան էր, նա այնպիսի տեսք ուներ, կարծես նա ոչ թե վաղ էր ծերացել, այլ միշտ ծեր էր եղել: Նա վայելող չէր, այդ պահին ոչ մի հաճույք չէր գտնում: Ինչ նա վերցնում էր, օգտագործում էր անմիջապես. նա հավաքում է այն ամենը, ինչ իրեն կարող է ծառայել»: (1, էջ 255) Կանետին պատկերում է Բրեխտին արտաքին աշխարհից, հասարակությունից օտարացած, որը գիտակցաբար թաքնվում է հագուստի հետևում:

Կանետիի կերպարները բացահայտվում են էական փաստերով և դրվագներով: Կանետին կարևորում է նկարագրվող կերպարների ոչ թե արտաքին հատկանիշները, այլ նրանց ներ-

քինը: Նրա համար կարևոր է անհատականության միասնությունը: Եվ այս մարդկանց հետ զրույցների, նրանց հետ անցկացրած տարիների արտացոլման միջոցով է նրա կյանքը դառնում իրականություն. նա գրում է իր վաղեմի ընկերների, ծանոթների և թշնամիների մասին: Բազմաթիվ նկարագրություններում կրկին կենդանի է դարձնում մարդկանց՝ հայտնի անձնավորությունների, ամենից առաջ, գրական ասպարեզից, որոնք կարևոր դեր են խաղացել նրա կյանքում, ազդել նրա մտքի զարգացման վրա:

Գրականություն

1. Canetti, Elias: Die Fackel im Ohr. Die Lebensgeschichte 1921-1931. Frankfurt am Main: Fischer, 1997.
2. Canetti, Elias: Das Augenspiel. Die Lebensgeschichte 1931-1937. Frankfurt am Main: Fischer, 1997.
3. Kappel, Beatrix: „Ein Dichter braucht Ahnen“, in: Bartsch, Kurt (Hrsg.): Experte der Macht: Elias Canetti. Graz: Droschl, 1985.
4. Stieg, Gerald: Betrachtungen zu Elias Canettis Autobiographie, in: Durzak, Manfred (Hrsg.): Interpretationen. Zu Elias Canetti. Stuttgart: Klett, 1983.
5. Strelka, Joseph P.: Einführung in die literarische Textanalyse. 2., durchges. Aufl., Tübingen; Basel: Francke, 1998.
6. Waldmann, Günter: Autobiographisches als literarisches Schreiben: Kritische Theorie, moderne Erzählformen und -modelle, literarische Möglichkeiten eigenen autobiographischen Schreibens. Baltmannsweiler: Schneider-Verl. Hohengehren, 2000.

**Ջանիկյան Ա.
Վ. Բրյուսովի անվ. ԵՊՊԸ**

ԿԼԱՍԻՑԻՉՍԸ ԵՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՌՈՄԱՆՏԻԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ

Ամեն ժամանակաշրջան ստեղծում է իր թատրոնը, թատրոնը իր հերթին ձգտում է բեմ հանել տվյալ ժամանակաշրջանի հիմնախնդիրները, մտածողությունն ու գեղագիտությունը: Դա նշանակում է, որ բեմարվեստն իր բնույթով նորարարական է: Այս առումով բացառություն չէր ֆրանսիական ռոմանտիկական դրաման, որը հեղաշրջող դեր կատարեց ժամանակի թատերական կյանքում և ինքնահաստատվեց՝ հակադրվելով կլասիցիստական թատրոնին:

Ռոմանտիկական դրամայի ներկայացուցիչները իրենց ստեղծագործություններով ու տեսական աշխատություններով մի կողմից մերժում էին կլասիցիստական թատրոնի ավանդույթները, մյուս կողմից՝ կամա թե ակամա, թերևս անգիտակցաբար, պահպանում, զարգացնում էին յուրովի:

19-րդ դարի սկզբին թատերական ասպարեզում ի հայտ եկած այդ ընդգրկուն ռոմանտիկական շարժումը, որն արդեն կես դար խարխուլում էր դասական թատերգության կառույցները, իր բարձրակետին հասավ 1830 թվականին, երբ վեջնականապես տապալեց կլասիցիստական ողբերգությունը: Ավելի ճշգրիտ՝ դա տեղի է ունեցել փետրվարի 25-ին, երբ «Էռնանիի» խաղանորը “Théâtre Français”-ում աննախադեպ իրադարձության է վերածվել: Ներկայացման մի քանի ժամերը, որոնք անցել են թատերական երկու՝ արդեն կայացած և նոր-նոր կայացող ուղղությունների կողմնակիցների սկզբունքային բախմամբ, վերջնականապես վճռել են ռոմանտիկական դրամայի ճակատագիրը: Այն հաղթականորեն մուտք է գործել ֆրանսիական բեմ: Բեմադրության հաջողությամբ չեն կարողացել խոչընդոտել հաջորդ երեկոների ընթացքում պարտերից լավող սուլոցները, օթյակներում պոռթկացող փռփկոցները. թատրոնն ամեն երեկո 5000 ֆրանկի եկամուտ է ունեցել: Այնուամենայնիվ, կլասիցիստական ողբերգության կողմնակիցները հեշտությամբ չեն զիջել դիրքերը, ներքին լարվածությունն ու հակամարտությունը շարունակվել է: Թեոֆիլ Գոթիեն, որ երկար չպետք է մոռանար «Էռնանիի» բորբոքած կրքերը, 37 տարի անց նույն համոզվածությամբ գրում է, որ «Էռնանին» իր ժամանակակցի համար այն դերը խաղաց, ինչ Կոռնեյլի «Սիդը» Կոռնեյլի ժամանակակցի համար:

Իրոք, որքան աղմուկով է ի հայտ գալիս գրական, բեմական նոր երևույթը, այնքան տպավորությունը խորը, հետաքրքրությունը մեծ է լինում, ինչը և կանխորոշում է հետագա հաջողությունները: Ակնհայտ է, որ «Էռնանիի» շուրջը բռնկված պայքարը ավելի էական, վճռորոշ մշանակություն ունեցավ ռոմանտիկական թատրոնի հետագա ճակատագրում, քան բուն թատերգությունը: Նույնը կարելի է ասել «Կրոմվելի» նախաբանի մասին, որը ռոմանտիզմի մանիֆեստը դարձավ:

Ռոմանտիկական դրամայի հեղինակները մերժում էին կլասիցիստական գեղագիտությունը՝ մասնավորապես տեղի և ժամանակի միասնության օրենքը, ինչպես նաև թատերգության ժանրային տարանջատումը, որը նրանց անհեթեթ էր թվում, քանի որ, իրենց համոզմամբ, եթե առօրյա կյանքում միախառնվում են ծիծաղն ու արցունքը, ապա նույնը կարող է տեղի ունենալ դրամաներում:

Չնայած ռոմանտիկական դրամայի հեղինակները ձգտում էին կյանքը անխաթար՝ իր ուրախություններով ու տխրություններով պատկերել, այնուամենայնիվ, նրանց ստեղծագործություններում գերիշխում էր ողբերգականությունը: Ողբերգական ճակատագիր ունեին ռոմանտիկական դրամաների գրեթե բոլոր գլխավոր հերոսները, ինչպես Ֆեդրան, Ներոնը, Անդրոմաքեն, Բրիտանիկուսը՝ կլասիցիստական թատերգություններում: Տարբերությունը թերևս այն էր, որ ռոմանտիկական դրամայի հերոսների ճակատագիրը կանխորոշում էր ոչ թե ֆորտունան, այլ իրավիճակի տրամաբանությունը, որն ի հայտ էր բերում նրանց դժբախտությունները՝ խորթ զավակ լինելը («Լորենցաչիո»), ինչպես նաև մարմնական («Արքան զվարճանում է»), բարոյական («Լուկրեցիա Բորջիան»), հասարակական («Մարիա Թյուդոր») արատներն ու թերությունները:

Եվս մի կարևոր հանգամանք՝ հայտնի է, որ կլասիցիստ թատերագիրները իրենց ժամանակի հիմնախնդիրներն արժարժելու համար դիմում էին անցյալին՝ անտիկ դարաշրջանին: Նույն կերպ սկսեցին վարվել ռոմանտիկական դրամայի հեղինակներն այն տարբերությամբ, որ իրենք հիմնականում նախապատվությունը տալիս էին Միջնադարին ու Վերածննդին: Անկախ այս տարբերությունից, ինչպես կլասիցիստական, այնպես էլ ռոմանտիկական թատերախաղերի հերոսները պատմությունից հայտնի, նշանավոր անձնավորություններ էին. կլասիցիստական ողբերգությունում Սիդը, Յորաքիոսը, Պողիկտոսը, Ներոնը, Անդրոմաքեն, ռոմանտիկական դրամայում՝ Լուկրեցիա Բորջիան, Կրոմվելը, Ֆրանսուա 1-ը, Լորենցաչիոն, Յենրի 3-ը և շատ ուրիշներ:

Լուրջ վեճեր հարուցեց նաև պատմական ճշմարտության հիմնահարցը: Ռոմանտիկական դրամայի հեղինակները կլասիցիստներին դատապարտում էին ոչ արժանահավատ կերպարներ կերտելու, հերոսների ապրումներն ու զգացումները չափազանցելու, պատմական փաստերն արհամարհելու համար, այն դեպքում, երբ Ռասինն, օրինակ, ամեն նոր ստեղծագործության նախաբանում փորձում էր հավաստել էր հավատարմությունն ավանդությանը: Ուշագրավ է, սակայն, որ Յյուզոն «Կրոմվելի» հիմնական աղբյուրների մատենագրությունը հրապարակելով, փաստորեն նույն նպատակն է հետապնդել: Եթե կլասիցիստները պատմության կամ առասպելների էջերում փնտրում էին նշանավոր իրադարձությունների կամ հոգեկան խոր բախումների դրդապատճառները, ռոմանտիկական դրամայի հեղինակները նույն այդ պատմության կամ առասպելների էջերում պեղում, իրենց ստեղծագործություններում վերամարմնավորում էին առանձնահատուկ գրավիչ

տեսարաններ («Յենրի 3-րդ», «Էռնանի», «Մարիոն Դելորմ»), ինչպես նաև գաղտնի կապեր և խարդավանքներ («Կրոմվել», «Մարի Թյուդոր», «Լորենցաչիո»): Ռոմանտիկական դրաման իրականացնելով իր իսկ հղացած գրական հեղափոխությունը, ձգտում էր անդրադառնալ ոչ այնքան պատմական, որքան քաղաքական ու հասարակական հիմնախնդիրների:

Թե՛ կլասիցիստական ողբերգություններում («Յորացիոս», «Սիդ», «Անդրոմաքե», «Պողիկտոս»), և թե՛ ռոմանտիկական դրամաներում («Էռնանի», «Ռուի Բլաս», «Լուկրեցիա Բորջիա») սերն առանձնահատուկ տեղ է գրավում: Չնայած այն ինքնանպատակ չէ: Սիրային սյուժեն սերտորեն առնչվում, միահյուսվում է պետական ու քաղաքական նշանակություն ունեցող կարևորագույն խնդիրների:

Հատկանշական է, որ կլասիցիստական ողբերգության հերոսները, որպես կանոն, հայտնվում են ծայրահեղ լարված իրավիճակներում, որոնցից փրկություն, ելք գտնել չեն կարողանում: Եթե անգամ գտնում են, ընկնում են անհամեմատ ծանր, ողբերգական դրության մեջ: Ասվածը հավասարապես վերաբերում է Պողիկտոսին ու Սիդին, Ֆեդրային ու Անդրոմաքեին: Նրանց ճակատագրի այս առանձնահատկությունը, որքան էլ տարօրինակ թվա, ժառանգել են ռոմանտիկական դրամայի հերոսները՝ Էռնանին, Լորենցաչիոն, Չատերտոնը, որոնք նույնքան անելանելի իրադրություններում են հայտնվում: Նշենք, որ կլասիցիստական ու ռոմանտիկական թատերգությունների հերոսների մեծ մասի կյանքն, ի վերջո, դժբախտ ավարտ է ունենում:

Ռոմանտիկական դրամայի հեղինակները մեղադրում էին կլասիցիստներին միջավայրի սահմանափակության՝ միմիայն արքունիքի իրադարձությունները, հարաբերությունները ներկայացնելու համար: Մինչդեռ Յյուզոյի «Արքան զվարճանում է», «Լուկրեցիա Բորջիա», «Էռնանի», «Ռուի Բլաս», «Մարիոն Դելորմ», Մյուսեի «Լորենցաչիո», Դյումայի «Յենրի 3-րդը և իր արքունիքը» դրամաները ցույց տվեցին, որ պալատական բարքերը նրանց նույնքան հետաքրքրում ու գրավում են:

Ռոմանտիկ թատերագիրները նախանձախնդրություն էին հանդես բերում նաև լեզվի հարցում, որպեսզի իրենց ստեղծագործությունները ավելի հավաստի, համոզիչ հնչեն, ձգտում էին երկխոսությունները պարզ, մատչելի կառուցել: Ստենդալը իր «Ռասին և Շեքսպիր» տրակտատում սուր քննադատության է ենթարկում կլասիցիստական չափածո խոսքը, մերժում միապաղաղությունը, արհեստականությունը: Նրա կարծիքով ցանկացած բանաստեղծականություն, ի վերջո, վնասում է դրամային, այն շինծու դարձնում:

Նույն կարծիքն է արտահայտել Հյուզոն «Կրոնվելի» նախաբանում՝ «Գեղեցիկ քառատողերն են ձախողում գեղեցիկ թատերախաղերը»: Մինչդեռ՝ հպանցիկ ընթերցանությունն անգամ ակնհայտ է դարձնում, որ, չնայած ռոմանտիկական դրամայի հեղինակները նախապատվությունը տալիս էին արձակին, այնուամենայնիվ, գեղեցիկ արտահայտություններից ու դարձվածքներից չէին խուսափում՝ տուրք տալով կլասիցիստ ողբերգուների նախասիրած բեմական պաթոսին, երկարաշունչ մենախոսություններին:

Նույնը թատերգությունների ծավալին է վերաբերում: Կլասիցիստական ողբերգությունը, որպես օրենք, պետք է բաղկացած լիներ 5 գործողությունից: Ռոմանտիկական թատերգություններում այդպիսի օրենք գոյություն չուներ, բայց շատ թատերագիրներ պահպանում էին նույն ծավալը:

Գրականության պատմության մեջ որևէ նոր երևույթ հանդես չի գալիս պատահականորեն, հասարակական ու գրական ընդհանուր օրինաչափություններից անկախ: Եվ որքան էլ նոր դպրոցը, ուղղությունը իրեն հաստատելու համար հակադրվի իր անմիջական նախորդին, մինչև իսկ ժխտի, միևնույն է, շատ առանձնահատկություններ ժառանգում և նույնիսկ զարգացնում, նոր մակարդակի է հասցնում: Դա նպաստում է թե՛ ինքնահաստատվելուն, թե՛ մոռացված հինը վերակենդանացնելուն, հարություն տալուն և հատկապես տվյալ ժամանակի արդիական հիմնահարցերին անդրադառնալուն: Ռոմանտիկական դրամայի կամ, ինչպես ընդունված է ասել, «էռնանիի դասերը» հիանալի յուրացրեցին 20-րդ դարի ֆրանսիական խոշորագույն թատերագիրները՝ Իոնեսկոն, Բեկկետը, Անույը: Նրանք հավատարիմ մնալով դասական ավանդույթներին՝ հինը ժխտելով, միաժամանակ նրա վրա հենվելով, ֆրանսիական թատերգությունը հարստացրին նոր գլուխգործոցներով:

**Ավագյան Է.Ս.
Վ. Բրյուսովի անվ. երՊԼՀ**

ԱՆՍԵՂ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ ՄԱՐԻԱՆՆԵ ԳՐՈՒԲԵՐԻ «ՔԱՄՈՏ ՀԱՆԴԱՐՏՈՒԹՅՈՒՆ» ՎԵՊՈՒՄ

Ժամանակակից ավստրիացի գրող Մարիաննե Գրուբերը գրական ասպարեզ է մտել 70-ական թվականներին: Նա իր գրական նախահայրերին է համարում Ֆրանց Կաֆկային, Ալբեր Կամյուլին, Ֆեոդոր Դոստոևսկուն, որոնց գաղափարները և

ստեղծագործություններն իրենց շեշտակի ազդեցությունն են ունեցել Մարինե Գրուբերի՝ որպես գրողի, ձևավորման վրա: Թեև հեղինակն իր ստեղծագործությունների նյութը և հերոսներին վերցնում է իր շրջապատից, լրագրային հոդվածներից, իսկ նկարագրվող գործողությունները կատարվում են մի այսօրում, հայրենի Բուրգենլանդում, այսուհանդերձ, անհրաժեշտ է այս ամենն ընկալել մեկ այլ հարթության վրա: Գրուբերի ստեղծագործություններն իրենց լեզվով և իմաստով նույնքան պարզ են, իսկ առաջ քաշած խնդիրների և զգացմունքայնության տեսակետից՝ նույնքան բարդ: Մարիաննե Գրուբերի գրականությունը, օժտված լինելով այնպիսի մեծ և հզոր զենքով, ինչպիսին խոսքի ուժն է, իր անսահման հնարավորություններով փորձում է հասնել նրան, ինչին հոգեբաններն իրենց հոգեթերապիայով: Նա, արտացոլելով պատմական և հասարակական երևույթները, փորձում է իր ընթերցողին օգնել գտնելու կյանքի իմաստը, կյանք, որտեղ չկան բացարձակ, օբյեկտիվ և տևական արժեքներ: Ըստ Գրուբերի «մարդն անում է բաներ, որոնց մասին նա ժամերով մտածել է, սակայն դրանք կրկին սխալ են լինում» /հեղինակի հետ հարցազրույցից/:

Մարիաննե Գրուբերի «Քամոտ հանդարտություն» /Windstille/ վեպը ծերացող մարդու էքզիստենցիալ ճգնաժամի քնարական վերլուծություն է, որն արտացոլված է Կերթենյան լճի, նրան հարող բնության և այդտեղ ապրող մարդկանց փոխհարաբերությունների մեջ:

Քսաներկուամյա սլովենացի Մարյային, որը ծովային ռեստորաններից մեկում սպասավոր էր աշխատում, գտնում են անտառում սպանված: Չնայած սպանության և նրա բացահայտման մասին վեպում խոսքը զնում է առաջին պլանով, իրականում այն հրաժեշտի մի ընդհանուր տրամադրություն է, ինչն իրար է կապում վեպի տարբեր հերոսների: Այսպես՝ տեսուչ Փինքերը պատրաստվում է անցնել թռչակի և հրաժեշտ է տալիս իր մասնագիտությամբ, երիտասարդ լրագրող Լիզան հրաժեշտ է տալիս մանկությամբ, Բյուբերգը՝ կյանքին: Յնարավոր մոտալուտ մահվան վախը հիվանդ սրտի պատճառով, և Մարյայի սպանության մեջ հիմնական կասկածյալ լինելը, ստիպում են Փրաթին՝ վեպի գլխավոր հերոսին, հարցականի տակ դնել իր ապրած կյանքը և շրջապատի հետ ունեցած հարաբերությունները, իր անցյալը: Նա գտնվում է առողջական ճգնաժամի մեջ, որը, սակայն, ավելի խորն է, այն գոյության ճգնաժամ է, որից այլևս չկա ելք:

Վեպի հերոսները հորինված չեն. ինչպես վերո նշեցինք, նրանց հեղինակը վերցրել է իր շրջապատից, իրական կյանքից:

Այսպես, Փրաթի կերպարով Գրուբերն ոգեշնչվել է Քերթնեայան մի հեռավոր վայրում, Օսիախեփ լճի ափին. Բյուբերգ ամուսնական զույգի նախատիպը նրա համար հանդիսացել են իր հունարենի ուսուցիչը տիկնոջ հետ միասին: Վեպի մյուս հերոսուհին՝ Լիզան, մարմնավորում է հենց իրեն՝ հեղինակին:

Հոգեբանության Վիեննական երրորդ դպրոցի ներկայացուցիչ Վիկտոր Ֆրանկլի մասին հետազոտությունները հազիվ երեսուն տարեկան Մարիաննե Գրուբերի մոտ առաջացրել էին շատ հարցեր, որոնք հատկապես կապված էին պատերազմի, նրա դրդապատճառների և ոճրագործ բնույթի հետ: Ինչպես գրում է հետպատերազմյան սերնդի ներկայացուցիչ մեկ այլ գրող՝ Ինգբերգ Բախմանը, «պատերազմ չի հայտարարվում, այլ այն շարունակվում է: Անամոթությունը դարձել է այլևս առօրեական»/Bachmann Ingeborg. 1959. 27/: Մարիաննե Գրուբերին մշտապես հուզում էին հարցեր՝ կապված իրենց խայտառակ մոտակա անցյալի հետ: «Ովքե՞ր էինք մենք, մարդասպանների, ռումբերի, քնած հրեշների զավակնե՞ր, պատասխանատու մի պատմության համար, որը մենք իսկականից չգիտենք: Ինչպիսի՞ն ենք մենք: Ինչպե՞ս է մարդը դիմացել համակենտրոնացման ճամբարում, ինչպե՞ս է մարդ դրանից հետո սկսել հաշվել ժամանակը: Ինչպե՞ս է մարդ կարողանում ապրել մի երկրում, որն անպատկերացնելի դաժան ձևով է փորձել սպանել, ինչպե՞ս կարելի է հանդուրժել այդ երկիրը, մարդկանց, հիշողությունները» /հեղինակի հետ հարցազրույցից/:

Նման իրավիճակում է նաև Լիզան: Նա նույնպես հետպատերազմյա սերնդի ներկայացուցիչ է, փնտրում է անցյալի համար պատասխաններ: «Ի՞նչ եք ուզում Դուք իմանալ: Ամեն ինչ, ինչ հնարավոր է:» /Gruber Marianne.1991. 113/

Լիզան, կարոտից խեղդված, վերադառնալով իր ծննդավայր, հայտնվում է Փրաթի կողքին՝ նրա համար ծանր պահին: Նա գնում է կորած մանկության հետքերով, փնտրում մի բան, որն այլևս չկա, ընկերանում Փրաթի հետ, հոգ տանում նրա համար, օգնում նրան վերջին անգամ վերապրել սիրահարվածության զգացումի տենչանքը: Նա Փրաթի հետ իր գրույցներում պահանջում է նրանից բացատրություն պատերազմի մասին: Լիզայի սառը մտածելակերպը, նրա ճշգրիտ պատկերացումները, տեսնելու և ուրիշներին հասկանալու ունակությունը նույնացնում են նրան հեղինակի՝ Մարիաննե Գրուբերի հետ:

Վեպի հենց սկզբում Փրաթը մեղադրվում է ու ձերբակալվում, սակայն, երբ հայտնաբերվում է փաստացի մարդասպանը, սխալ մեղադրանքի համար իրեն մեղավոր զգացող տեսուչ Փինկերն անձամբ է ազատում Փրաթին: Տունդարձի ճանապարհին

Փրաթը խնդրում է իր «ազատարարին» կանգնեցնել մեքենան, որպեսզի վերցնի փոստից մի կապոց: Նա վերցնում է կապոցը, սակայն չի վերադառնում մեքենա, այլ շարունակում է գնալ իր ճանապարհով, որը հաճախ էր անցել Լիզայի հետ միասին, հանում է մի հրացան և կրակում իրեն: Փինկերը, որը հետո է կռահում Փրաթի մտադրությունը, այլևս ի վիճակի չի լինում փրկել նրան:

Գիտակցելով, որ գտնվում է մղձավանջում, Փրաթն իրեն ցուցաբերում է որպես թուլամորթ և վախկոտ: Նա չի փնտրում պրոբլեմների հետ իրական առճակատում, նա փախչում է նրանցից, վախկոտ է, նախընտրում է չեզոք պահվածքը:

Իր վախերի մեջ Փրաթը փախչում է դեպի բնությունը: Դժվար պահերին նրան օգնում է լճի պատկերը: Նա սիրում է և՛ ամպրոպը, և՛ հանգստությունը և թե՛ անշարժությունը: Պատահական չէ Գրուբերը վեպն անվանել «Քամոտ հանդարտություն»: Չէ՞ որ բնորոշ ձևով վեպի վերջում տիրում է քամոտ հանդարտություն: Սա մի լռություն է, որը կարող է մի վայրկյանում վերածվել փոթորկի, որի ավարտը ողբերգական է: Սկսվում է մի երկար ինքնամեղադրանք, մի հետադարձ հայացք դեպի անցյալը: Նա սկսում է հավատալ փաստին, որ սպանության մեջ ինքն է կասկածյալներից մեկը: Փրաթն իրեն զգում է այնպես, ինչպես Կաֆկայի հերոսը՝ մեղադրված, առանց պատժելու արժանի արարք անելու: Նրանը, ինչպես «Դատավարության» Յոզեֆ Կ.-ի մեղքը, անհիմն է, սակայն նա, ինչպես և Յոզեֆ Կ.-ն, իրենց պահում են իսկական մարդասպանի պես:

Ինչպես Կաֆկայի «Դատավարությունը», այնպես էլ Գրուբերի վեպն ունի ողբերգական ավարտ և ոչ միայն սպանության փաստի պատճառով. այն ունի ավելի խորը պատճառ, քանի որ ողբերգականությունը Փրաթի վերաբերմունքն է դեպի իրեն շրջապատող աշխարհը: Նրա կինը՝ Կատարինան, տարիներ շարունակ ամուսնու պատճառած դառնությունների ու դավաճանության պատճառով նետվել էր հարբեցողության գիրկը, երեխաները հեռացել էին հայրական տնից, ապրում էին արտասահմանում և սառը հարաբերություններ էին տիրում նրանց միջև:

Չնայած վեպի քրեական բնույթին, այն ունի հասարակական, սոցիալական և հոգեբանական շարժառիթներ:

Մարյայի մահը խորհրդանշական է այն բոլոր սպանությունների համար, որոնք կան մեր դաժան կյանքում: Նա՝ Կատարինան, Բյուրերգը իրականում հասարակության անտարբերության զոհերն են: Նրանց կյանքն անհիմաստ է, այնպես ինչպես անհիմաստ է նրանց մահը, քանի որ անհիմաստ և անտրամաբանական են խաղի կանոնները, որոնցով խաղում են ուժեղ մարդիկ այս կյանքում: Այդ

թվացյալ ուժեղներն իրականում թույլ են, անվճռական, կարևոր վճիռները թողնում են ուրիշներին: Սակայն կյանքը, անգամ ուժեղների համար, անսպառ չէ: Ծերությունը և հիվանդությունը նրանց ստիպում են խորհել և հասկանալ, որ ավելի լավ է սիրել, քան ատել, հարգել, քան արհամարհել, ձեռք բերել, քան կորցնել, քանի որ վերջինս շատ ավելի հեշտ է:

Սարիաննե Գրուբերն իր այս վեպով նախազգուշացնում է ընթերցողին, որ անհրաժեշտ է վախենալ լռությունից, քանի որ կյանքում ոչինչ հավերժ չէ, և որ հանդարտությանը մի օր փոխարինելու է փոթորիկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bachmann, Ingeborg / 1959/. Alle Tage. In: Die gestundete Zeit. Gedichte. München
2. Gruber, Marianne / 1991/ Windstille. Wien.
3. Gruber, Marianne /1986/ «Zwischenstation».Verlag der Österreichischen Staatsdruckerei
4. Moser, Gerhard /10.04.1987/ §Terror-von wo auch immer|. In: „Volksstimme“ Beilage , Wien
5. Kafka, Franz /1998/. Der Prozess. Surkamp Taschenbuchverlag
6. Kafka, Franz /1999/. Das Schloss. Fischer Taschenbuch Verlag
7. Keckeis, Johann / 16.04.1982/ „Existenzanalyse als Science-fiction“ In: Zürichsee-Zeitung
8. Magele, Gundrun /10.01.1992/ §Gewitterträchtige Seelenlandschaft In: Der Standard, Wien
9. Rottensteiner, Franz /21.04.1987/ „Zwischen Fronten“. In: Unabhängige kulturpolitische Wochenzeitung. Wien
10. Wimmer, Paul / 27.8.1981/ „Der Mensch ist stillgelegt“. In: „Arbeiter Zeitung“. Wien

Այվազյան Յ. Ա.
Վ.Բրյուսովի անվ. երՊԼՀ

ՖԻԼԻՊՊ-ՕԲԵՐ ղը ԳԱՍՊԵԻ «ՄԻ ԳՐՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ» ՎԵՊԸ՝ ՈՐՊԵՍ ԱՌԱՋԻՆ ԿԱՆԱԴԱԿԱՆ ՊԱՏՄԱՎԵՊ

Ֆրանսալեզու կանադական պատմավիպասանության ձևավորումը ընդունված է կապել հայր և որդի Գասպեների անվան հետ, որոնք կարողացան իրենց վեպերում վերստեղծել Կանադայի

ողբերգական պատմության հերոսական էջերը: Գասպե հայրը շատ ավելի սիրված և հայտնի գրող էր Կանադայում, քան նրա որդին, սակայն վերջինս հորից 25 տարի շուտ է սկսել ստեղծագործել և համարվում է առաջին կանադական պատմավեպի հեղինակը:

Ֆիլիպպ-Ինյաս Ֆրանսուա Օբեր դը Գասպե-որդին (Philippe-Ignace François Aubert de Gaspé-fils 1814-1841) 21 տարեկան հասակում դարձել է Քվեբեկի “Le Canadien” և “Quebec Mercury” թերթերի խմբագիրը: Իր սկանդալային վարքի համար նա դատապարտվել է բանտարկության, իսկ բանտից դուրս գալուց հետո՝ վրեժխնդրության նպատակով պայթուցիկ հեղուկով լի շիշ է նետել խորհրդարանի նախասրահի վառարանի վրա: Ձերբակալման հրամանից հետո նա փախել և պատսպարվել է իր հոր կալվածքում: Կալվածքում մենակյաց ապրելու տարիներին է Գասպե-որդին գրում իր հանրահայտ «Գանձեր որոնողը կամ Մի գրքի ազդեցություն» վեպը, որի ստեղծմանն իր հիշողություններով շատ է նպաստել հեղինակի հայրը: Որոշ գրականագետներ նույնիսկ այն կարծիքն են հայտնել, որ վեպի „L’Etranger“, գլուխը գրել է Գասպե հայրը: 1840 թ. վատառողջ Գասպեն դարձել է Նոր-Շոտլանդիայի Օրենսդիր Պալատի թղթակիցը և մահացել 1841 թ. մարտի 7-ին:

Գասպե-որդու միակ «Գանձերի որոնողը կամ մի գրքի ազդեցությունը» („Le chercheur de trésors ou l’Influence d’un livre”) վեպի ստեղծման մասին ազդարարեց “Le Télégraphe” թերթը 1837 թ. ապրիլի 14-ին և տպագրեց մի հատված: Վեպը, որն արդեն կրում էր «պատմավեպ» ենթավերնագիրը, ամբողջությամբ տպագրվեց միայն սեպտեմբեր ամսին, որին էլ անմիջապես հետևեց անխնա քննադատությունը:

Գասպե որդու վեպի նախաբանը կարելի է համարել քվեբեկյան գրական մանիֆեստ, որտեղ հեղինակը հրաժարվում է «Լյուդովիկոս XV-ի պալատի հովվերգական ավանդույթներից»¹ և գրողների ուշադրությունն ուղղում է դեպի բնությունն ու ճշմարիտը:

Ինչպես հայտնի է, վեպերի նախաբանները հաճախ հեռու են նրանց բովանդակություններից, որովհետև այստեղ հեղինակներն արտահայտում են իրենց գեղագիտական սկզբունքները և գրականության զարգացման մասին իրենց պատկերացումները: Կանադացի հեղինակներն իրենց նախաբաններում բազում անգամ նշում են, որ հարում են ռեալիզմին, բայց նրանց վեպերը լի են արտասովոր արկածներով: Այսպես, Գասպե որդին նախաբանում փորձում է հավատացնել, որ վեպի գործողություններն իրական են,

¹ Philippe-Aubert de Gaspé “Le Chercheur de trésors ou l’Influence d’un livre”, Québec, 1953, p. 2

սակայն վեպն ըստ եռթյան լի է մտածված պատկերներով:

Իր վեպը գրելու ժամանակ Գասպեն հստակ պատկերացում չուներ վեպի կառուցվածքի մասին, ինչը պայմանավորված էր սեփական փորձի և գրական ավանդույթների պակասով: Վեպը գրել է քսաներեք տարեկան հասակում, երբ դեռ լավ ծանոթ չէր ֆրանսիական ռոմանտիկական պատմավեպերին: Նրա նպատակն էր ստեղծել մի այնպիսի գործ, որտեղ կհավաքագրեր Կանադայի գեղջկական երգերն ու հին նախապաշարմունքները: Գասպե որդին ենթավերնագրում իր վեպն անվանում է «պատմական», քանի որ այնտեղ պատկերված հերոսներն այնպիսին են, «ինչպիսին նրանց հիշում է պատմությունը»: Յեղիմակն ավելացնում է, որ իր երկրին է նվիրում կանադական բարքերի մասին առաջին վեպը: Իսկ գրողի իր կրեդոն նա այսպես է բացատրում. «...դա մարդկային բնությունն է, որը պետք է օգտագործել մեր դրական դարաշրջանի համար, որն այլևս չի բավարարվում բուկոլիկներով, ուռենու տակի մեղմ գրույցներով, կամ բնության գրկում միայնակ զբոսանքներով... Մեր արդյունաբերական դարաշրջանում մենք պետք է զարգացնենք մարդկային սիրտը... Վերը նշվածը կարող է զվարճացնել միայն Լյուդովիկոս 14-ի կամ Լյուդովիկոս 15-ի տոնական հավաքություններին ...»¹

Առաջին իսկ էջից հեղինակը նշում է, որ գործողությունները կատարվում են Սեն-Լորան գետի հարավային ափին գտնվող մի վայրում, որի անվանումը նա չգիտի: Վեպի գլխավոր հերոսը՝ Շարլ Ամանը, որն ի դեպ հեղինակի պնդմամբ իրական կերպար է, ալքիմիկոս է, որն ունի հասարակ մետաղները ոսկի դարձնելու անմիտ ցանկություն: Ամանը երազող հոգի է, որը փնտրում է փիլիսոփայական քարը: Սև մագիայի օգնությամբ հարստություն դիզել և համընդհանուր հարգանք վայելել ցանկացող Ամանին բոլորը խենթի տեղ են դնում: Նա ունի Դյուպոնի ուղարկում է սև հավ գողանալու՝ իր փորձարկումների համար, բայց քանի որ հավը գողացված չէր, ալքիմիկոսի ջանքերն ապարդյուն են անցնում: Եվ քանի որ հանդերձյալ աշխարհի ուժերի հետ շփվելու համար հերոսին անհրաժեշտ էր մի կախված մարդու չորացած ձեռք, վեպի սյուժեի մեջ ներմուծվում է լրացուցիչ Ֆաբուլային գիծ, որը կապված է մի հանցագործի՝ Գիյլմեի սպանության և կախված մարդասպանի ձեռքը ստանալու Ամանի փորձերի հետ: Այս երկրորդ սյուժեի մեջ ներառված են երկու միջանկյալ լեգենդներ, որոնք վեպի ընդհանուր սյուժետային գծի հետ ոչ մի կապ չունեն: Յենց այս լեգենդներն են վերագրում հեղինակի հորը:

¹ Նույն տեղում, էջ 2

Շարլ Ամանի ճակատագրին զուգահեռ հեղինակը ներկայացնում է նրա աղջկան սիրահարված մի բժիշկ ուսանողի՝ Սեն-Սերանի ճակատագիրը, որն իր մելամաղձությամբ և աղմկոտ աշխարհի հանդեպ սարսափով հիշեցնում է շատբրիանական հերոսներին:

Մի շարք իրադարձություններից հետո Ամանը մեծ դժվարությամբ թափանցում է մի քարանձավ՝ հույս ունենալով այնտեղ գանձեր գտնել: Անօգուտ փնտրտուքներից հետո նա որոշում է տուն վերադառնալ նավով, սակայն փոթորիկ է բարձրանում, և Ամանը հագիվ է մազապուրծ լինում: Վերադառնալով տուն՝ նա իր աղջկան ամուսնացնում է արդեն բժիշկ դարձած Սեն-Սերանի հետ և միայնակ շարունակում ալքիմիկոսի իր փորձարկումները և մագիայի գրքի ուսումնասիրումը:

Հարստություն դիզելու ցանկությունը բացատրում է գլխավոր հերոսի գործելակերպը, որը, սակայն, ողջ պատմության արտաքին քողն է միայն: Չունենալով բավականաչափ քաջություն, ուժ, էներգիա և գիտելիքներ՝ ինքնահաստատվելու և հասարակության մեջ իր արժանի տեղը գտնելու միջոցը նա տեսնում է հարստության մեջ, որին էլ փորձում է հասնել կախարդանքով: Նրա ալքիմիական փորձարկումները ստեղծում են ակտիվ գործունեության տպավորություն, թեև իրականում նա երազելուց բացի ոչինչ չի ձեռնարկում: Ամանի կերպարը խորհրդանշական է այն առումով, որ ներկայացնում է այն սերնդի հոգեբանությունը, որի լեգենդների միջոցով հիշատակված անցյալը եղել է փառավոր ու հերոսական, ներկան ստորացումների և անկարողությունների ժամանակ է (Անգլիայի տիրապետությունը և մերկանտիլ Ամերիկայի գալթակղիչ օրինակը), և, վերջապես, ապագան, որը անորոշ է և ներկայանում է հույսերի ու երազների ձևով: Սակայն, ի տարբերություն ռոմանտիկների, հեղինակին ապագան չի թվում մռայլ ու անհույս: Պարզապես գլխավոր հերոսը մարմնավորում է այն հուսահատ ֆրանսկանադաճիներին, որոնք իրենց նոր հայրենիքի ողբերգական անցյալից հերոսական դասեր քաղելու ուժը չունեին և այդ նույն անցյալից նրանց մնում էր միայն վերցնել սնահավատությունը: Վեպի ենթավերնագրում արտացոլված ալքիմիայով և մագիայով զբաղվելը մեր կարծիքով ոչ այլ ինչ են, եթե ոչ հուսահատ ժողովրդի անզոր ճիգեր: Ինչ վերաբերվում է ապագա սերնդին, ապա այն, ի դեմս Սեն Սերանի, ետ է կանգնում մագիայից և իրական գիտության հետ է կապում իր ապագան, չնայած արդեն ծանոթացել էր ճշմարտության, հոգեկան հանգստության և ներդաշնակության համար տեղ չունեցող հաշվենկատ աշխարհի հետ:

Այսպիսով, վեպի գեղարվեստական համակարգում նկատ-

վում է թե՛ ռոմանտիկական և թե՛ ռեալիստական մեթոդների սինթետիկ միաձուլում. մռայլ, խորհրդավոր մթնոլորտը, անդրշիրիմյան ոգիների հարությունը, իրադարձություններն ու բնանկարները համադրվում են տեղական բանահյուսության, ժողովրդական կենցաղի պատկերների վրա ստեղծված թեմաների և կերպարների ռեալիստական նկարագրության հետ:

Այս վեպը միակ քվեբեկյան ստեղծագործությունն է, որն իր թեմայով և առանձին գծերով հիշեցնում է եվրոպական նախառոմանտիզմը, սակայն մեր ուսումնասիրությունները չեն հայտնաբերել որևէ կոնկրետ վեպի ազդեցություն, նամանավանդ, որ Գասպե որդին երբևէ չի հիշատակել Ուոլպոլի, Ռադկլիֆի, Սետյուրիմի, Լյուիսի կամ նույնիսկ ֆրանսիացի Կազուտտի անունները: Իհարկե չի բացառվում նախառոմանտիկական գեղագիտության հետ ծանոթությունը Նոդյեի ստեղծագործության միջոցով, որի անունը, ի թիվս մյուս հեղինակների (Բալզակ, Դյումա, Դյուգո, Լամարտին, Շեքսպիր, Վ. Սկոտտ) նշում է Գասպեն և նույնիսկ նրանց ստեղծագործություններից մեջբերումներ անում՝ չկրելով սակայն նրանց անմիջական ազդեցությունը: Նույնիսկ իր հերոսների հոգեվիճակը նկարագրելու համար (գուցե փորձի պակասությունից կամ գուցե իր ֆրանսիացի և անգլիացի «գործընկերներին» տուրք տալու նպատակով) հեղինակը մեջբերում է նրանց ոսկեդենիկ տողերը: Օրինակ, իր հերոսին՝ Սեն-Սերանին նկարագրելիս Գասպե որդին պարզապես մեջբերում է Բայրոնին: Գասպե որդու ֆրանսերեն ստեղծագործության մեջ անգլերեն մեջբերումը XX դարում հսկայական տարածում գտած քվեբեկյան հեղինակների ստեղծագործությունների սինթետիկ կառուցվածքի առաջին արտահայտությունն է: Այդ երևույթը, որը բացատրվում է XX դ. կանադական երկու մշակույթների ինտեգրացմամբ, դառնալու է հետագայում երկու Կանադաների միջև քաղաքական բախումների արտահայտություն: Սակայն հայրենասիրական XIX դարում մեջբերումը Բայրոնից չի դատապարտվում որպես անգլամոլություն, այլ դիտվում է որպես անգլիական հանճարին տուրք տալու ձգտում:

Երբեմն հեղինակի համեմատությունները դասականների հետ տարակուսանք են առաջացնում. «Արը Վալտեր Սկոտտն իր գանձերը փնտրում էր մենաստանի ավերակների մեջ, մինչդեռ մեր հերոսը տարբեր մտքեր ուներ և դրանք փնտրում էր լճերի ափերին, մութ քարանձավներում և ծովի հատակին... Ուա, ով տեսել էր նրան զբոսնելիս, պոետ Կազիմիր Դըլավիմյի հետ կարող էր բացականչել.

„ Ah! Qui peindra jamais cet ennui dévorant
Les extases d’espoir, les fureurs solitaires,

D'un grand homme ignore qui lui seul se comprend....,¹

1864 թ. Անրի-Ռայմոն Կասգրենը մի շարք փոփոխություններ է մտցնում այս տեքստի մեջ և հենց այս փոփոխված տարբերակով է այդ վեպը վերահրատարակվում մինչ այժմ: Ենթադրվում է, որ վեպում ներկայումս առկա ռեալիստական տենդենցներն էլ ավելի ցայտուն են եղել մինչև Կասգրենի միջամտությունը, որը տեքստը մաքրագարդել է հայհոյանքներից և նույնիսկ «սեր» (“amour”) բառից, որն ամենուր փոխարինվում է «համակրանք» (“affection”) կամ «ընկերություն» (“amitié”) բառերով:

Իր հոր՝ «Յին կանադացիներ» նրբաոճ վեպից խիստ տարբերվող Գասպե որդու այս վեպն ամենատարբեր մեկնաբանություններ է ստացել: Այն մեծ հետաքրքրություն է առաջացրել նաև իր սոցիոլոգիական և բանահյուսական նշանակությամբ: Ֆրանսալեզու կանադական այս առաջին պատմավեպն իր ուրույն տեղն է զբաղեցնում քվեբեկյան գրականության գեղարվեստական գոհարների մեջ:

Լոբյան Լ.Գ.

Վ. Բրյուսովի անվ. ԵրՊԼՀ

ՇԱՌԼ ԼՈՒԻ ՄՈՆՏԵՍՔՅՈՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Ֆրանսիական Լուսավորության վառ ներկայացուցիչ Շ.Լ.Մոնտեսքյոն, իր քաղաքական տրակտատներում բազմաթիվ խնդիրներ շոշոփելով, անդրադառնում է նաև քաղաքական ազատության խնդրին:

Դեռևս 17-րդ դարում, երբ բուրժուական հասարակական քաղաքական ինստիտուտները նոր էին հիմնադրվում, անգլիական մատերիալիզմի խոշոր ներկայացուցիչ Ջոն Լոկը, որի քաղաքական հայացքները մեծ ազդեցություն ունեցան 18-րդ դարի Ֆրանսիական Լուսավորության ձևավորման վրա, հայտարարում է, որ «այնտեղ, ուր բացակայում է օրենքը, չկա ազատություն»: Պատահական չէ, որ Մոնտեսքյոյի գլխավոր աշխատությունը կրում է «Օրենքների ոգին» անվանումը: Իր աշխատության մեջ Մոնտեսքյոն օրենքների օբյեկտիվ հիմքը բնորոշում է «իրերի բնույ-

¹Օ՛, ո՞վ երբևիցե կպատկերի այդ ամենակուլ ձանձրույթը,

Հուլյսի էքստազները, միայնակ կառաղությունները,
Այն մեծ մարդու, ով միայն ինքն է իրեն հասկանում...

(Քարգմանությունը՝ հեղինակի) նույն տեղում, էջ 72

թից բխող անհրաժեշտ հարաբերություններ»¹: Նա պնդում է, որ օրենքը մարդկային բանականությունն է, որը ղեկավարում է բոլոր ազգերին, իսկ յուրաքանչյուր ազգի քաղաքական և քաղաքացիական օրենքներն այդ բանականության առանձին դեպքերն են:

«Օրենքների ոգին» աշխատության մեջ Մոնտեսքյոն մշակեց իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ նշելով, որ իշխանությունների կենտրոնացումը մեկի ձեռքում կարող է տանել բռնապետության:

Քաղաքական ազատության ընթացումը սերտորեն կապված է պետության ծագմանն ու էությանը վերաբերող հարցերի հետ:

Արմատապես վերափոխելով բնական իրավունքի ավանդական տեսությունը՝ Ջ.Լոկը նշում է. «Քաղաքական իշխանությունը և նրա ծագումը հասկանալու համար, մենք պետք է դիտարկենք, թե ինչպիսի բնական վիճակում են բոլոր մարդիկ, իսկ դա իսկական ազատության վիճակն է իրենց անձի և սեփականության որոշման նկատմամբ... Դա նաև հավասարության վիճակն է, որտեղ յուրաքանչյուր իրավունք փոխադարձ է»²:

Մոնտեսքյոն իր հերթին անդրադառնում է բնական իրավունքին և բնական վիճակը բնութագրող օրենքներին՝ առաջին բնական օրենքը համարելով խաղաղությունը, երկրորդը՝ սնունդ հայթայթելու ձգտումը, երրորդը՝ յուրաքանչյուր կենդանի օրգանիզմի հակումն իր ցեղատեսակի նկատմամբ: Երեք բնական օրենքների հասարակական դաշինքի տեսության ոգով առաջադրվում է 4-րդ օրենքը՝ հասարակության մեջ ապրելու ցանկությունը, այսինքն հասարակության և պետության ստեղծման անհրաժեշտության զիտակցումը մարդու կողմից՝ սկիզբ առած մարդու հետևություններ անելու և որոշումներ ընդունելու բանական ընդունակություններից:

Յեղիմակային ազատության դրսևորում և մեծ հմտություն է հարազատ հասարակությանը օտարի աչքերով նայելը և նրանում առկա արատները բացահայտելը: Միայն «Պարսկական նամակներ»-ի շարադրանքը Մոնտեսքյոն սոցիալական հեղափոխություն է անվանում, նշելով, որ հարկավոր է ուժեղ երևակայություն՝ նման զրույցին տրվելու և շատ համառություն՝ այն պահպանելու համար: Գրական այս հմարը ազատություն է ընձեռնում հեղինակին զեղարվեստական կոնկրետությամբ և այլաբանական պատմություններով քաղաքական հայացքները հասցնել ընթերցողին: Այլաբանական նման պատմություն է «Պարսկական նամակներ»-ի

¹Montesquieu, L'Esprit des lois, 1995, p.27

² T.2, ctp.6

սկզբում «տրոգլոդիտների» առեղծվածը՝ որպես համատեքստից դուրս միջանկյալ մի հատված, ուր նա քննարկում է «անսահման ազատության» գաղափարը՝ ցույց տալով, որ իր քնահաճույքներին տրված մարդկությունը դատապարտված է կործանման:

Չընդունելով կյանքի կողմից հասարակությանը հարկադրված ոչ մի օրենք՝ «տրոգլոդիտները» սկզբում պահանջում էին անձնական ազատություն: Բայց նրանց չափազանց մեծ պահանջները կարող էին նրանց ներքաշել քաոսի մեջ և ստեղծել մի պետություն ուր անարխիա էր տիրում: Հետևելով մի քանի իմաստունների խորհուրդներին՝ նրանք հասկացան, որ հասարակությունը պահպանելու միակ միջոցը անսահման ազատության հորդումը սահմանափակելն է:

Այսպիսով, Մոնտեսքյոյի աշխատություններում քաղաքական ազատությունը անսահմանափակ չէ: Այն սահմանափակվում է կանխիչ մեխանիզմով, որը զսպում է մարդկանց սրտում տեղ գտած կատաղության պոռթկումը: Կործանարար համարելով «անսահման ազատության» գաղափարը՝ Մոնտեսքյոն անհրաժեշտ է համարում կարգ ու կանոնի առկայությունը և այն երաշխավորելու համար երկու արժեք է կարևորում՝ արդարությունն ու բանականությունը, որոնք էլ համաձայն նրա, ապահովում են աշխարհի հաստատուն ներդաշնակությունը:

Ազատության թեման շոշափվում է Մոնտեսքյոյի ինչպես «Պարսկական նամակներ»-ի, այնպես էլ «Օրենքների ոգին» աշխատության մեջ, որտեղ ազատությունը չի դրսևորվում որպես ինքնանպատակ, այլ որպես երջանկության անհրաժեշտ նախապայման, որպես յուրաքանչյուրի անվտանգության երաշխիք: Համաձայն Մոնտեսքյոյի, ազատ ժողովուրդն այն ժողովուրդը չէ, որն ունի կառավարման այս կամ այն ձևը, այլ այն ժողովուրդը, որն օգտվում է օրենքով սահմանված կառավարման ձևից:

Մոնտեսքյոն հանդես է գալիս բուրժուադեմոկրատական ազատության օգտին և պահանջում է, որպեսզի միապետական իշխանությունը ժողովրդին ամենայն հարգանքով վերաբերվի: Նա գտնում է, որ միապետական համակարգը ցանկացած քաղաքացու ամենաքիչը քաղաքական ազատություն պետք է երաշխավորի: Շարադրելով տարբեր կարծիքներ քաղաքական ազատության մասին նա նշում է, որ մի քանիսն ազատություն ասելով հասկանում են հնարավորություն՝ գահընկեց անելու նրան, ում նրանք պարզևել են բռնապետական իշխանություն, ինչպես նաև ընտրելու նրանց ում նրանք պետք է հնազանդվեն: Ինքը՝ Մոնտեսքյոն, կողմնորոշում էր գտնում օրենսդրական ճանապարհով կատարվող հեղափոխության մեջ:

Թեպետ Մոնտեսքյոն հանրապետության գլխավոր արատը համարում էր ժողովրդական զանգվածների կողմից ղեկավարվելը, որոնք գործում են ոչ թե բանականության այլ կրքի թելադրանքով և, չնայած այն բանին, որ նա գերադասում էր բանական միապետին, այդուհանդերձ նա խոստովանում է, որ հանրապետությունը մի շարք դեպքերում ոչ պակաս օրինաչափ է, որքան միապետությունը: «Պարսկական նամակներ»-ում Յին Յունաստանի պատմությունը նա բնորոշում է որպես նրա ժողովրդի ազատագրում միապետական իշխանությունից, նշելով, որ միայն հանրապետությունում հույները ձեռք բերեցին իսկական ազատություն և հասան մշակույթի և տնտեսության մեծ վերելքի:

Մոնտեսքյոն վճռականորեն դատապարտում է ստրկությունն՝ իր բոլոր դրսևորումներով հանդերձ և հայտարարում, որ քաղաքացին որը համակերպվել է բռնապետությանը կորցնում է քաղաքացի լինելու իրավունքը և դառնում է ստրուկ, որն արժանի է արհամարհանքի:

Թեպետ Մոնտեսքյոն հանդես է գալիս թագավորական իշխանության հետ կոնսերվատիվ օգտին, այնուամենայնիվ, ֆրանսիական բուրժուական հեղափոխության գործիչներն այլ կերպ գնահատեցին նրա ելույթները: Վկայակոչելով նրա աշխատությունները՝ նրանք հիմնավորում էին Ֆրանսիայում հանրապետական կարգի հաստատման անհրաժեշտությունը:

Մոնտեսքյոյի աշխատություններում առկա իդեալիզացիան պայմանավորված է դեմոկրատիայի նորմատիվային մոտեցմամբ, քանի որ այս դեպքում կատեգորիաները դասակարգվում են ելնելով մարդու իդեալներից, արժեքներից և ցանկություններից: Արժեքները գրավիչ են, սակայն կտրված են իրականությունից:

Այսպիսով, Մոնտեսքյոյի քաղաքական հայացքները մեծ ազդեցություն ունեցան 18-րդ դարում: Դրանք մասամբ սահմանափակեցին միապետի իշխանությունը: Մոնտեսքյոյի քաղաքական հայացքներն արդիական են նաև մեր օրերում, քանզի ցանկացած դեմոկրատական երկրում ազատության պահպանումը քաղաքական համակեցության գլխավոր նպատակն է և պահանջում է պետության իրավասությունների տարանջատում:

СОДЕРЖАНИЕ

Русская и армянская литературы

1. Саркисян Л.	Влияние Лермонтова на творчество армянских писателей	3
2. Мусаелян Э.	Екатерина II и ее первый сатирический журнал «Всякая всячина»	7
3. Дерцян А.	Религиозно-философские воззрения Н.Лескова, В.Короленко, В.Гаршина и А.Чехова в произведениях 1880-х гг.	12
4. Шубин Р.	Рольевые характеристики образа автора в «Уроках Армении» Андрея Битова	17
5. Мамонт З.	Сатира в период первой русской революции 1905 г.	22
6. Аветисян А.	Взаимосвязанное изучение русской и родной литератур («Люцерн» Л.Н. Толстого и «Артист» А.Ширванзаде)	27
7. Аматауни З.	Эволюция творчества Игоря Северянина	32
8. Մելքոնյան Լ.	Շրճական Միմիկիական Նարեկանցու «Մատյան»-ում	35

Зарубежная литература

1. Арзуманян С.	В. Скотт и Д.Ф.Купер (О композиции и об разной системе романа Купера «Шпион»)	46
2. Меликбекян А.	Специфика конфликта героя и среды в романе Дж. М. Кутзее «Бесчестье»	52
3. Гуланиян К.	Основные философские проблемы в романе Дж. Фаулза «Червь»	57
4. Этарян Е.	Проблема объединения Германии в немецкой прозе 90х гг.	64
5. Գինոյան Գ.	Անցյալը ներկան է /Հիշողության խնդիրը Բ.Հայնի «Հորնի մահը» վեպում/	70
6. Սաֆարյան Լ.	Գրական դիմանկարները Է. Կանետիի ինքնակենսագրական վեպում	75
7. Ջանիկյան Ա.	Կլասիցիզմը և ֆրանսիական ռոմանտիկական դրաման	79
8. Ավագյան Է.	Ամենդ մեղավորները Սարիաննե Գրուբերի «Քանոտ հանգստություն» վեպում	83

9. Այվազյան Յ.	Ֆիլիպպ-Օբեր դը Գասպեի «Մի Գրքի ազդեցությունը» վեպը՝ որպես առաջին կանադական պատմավեպ	87
10. Լորյան Լ.	Շառլ Լուի Մոնտեսքյոյի քաղաքական ազատության ըմբռնումը	92

Համակարգչային շարվածքը՝ Վ.Բոյունովի անվ. ԵրՊԼՀ-ի
համակարգչային կենտրոն /ղեկավար՝ դոց. Վ.Վ.Վարդանյան/
Օպերատորներ՝ Հ.Մ.Էլչակյան
Ս.Վ.Առաքելյան

Ստորագրված է տպագրության՝ 20.07.2003
Հանձնված է տպագրության՝ 02.10.2003

Տպաքանակ՝ 101

Компьютерная верстка: компьютерный центр ЕрГЛУ
им. В.Я.Брюсова (руководитель — доц. В.В.Варданян)
Операторы: Г .М.Элчакян
С.В.Аракелян

Подписано к печати: 20.07.2003
Сдано в печать: 02.10.2003

Тираж 101